ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

«ՀՈՒՍԵՅՆԻ ՊԼԱՆԸ» ԵՎ ՆՐԱ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐՆ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

1972թ. մարտի 15-ին Հորդանանի Հուսեյն I թագավորը, ելույթ ունենալով Բասման դղյակում, հանդես եկավ «Արաբական Միացյալ Թագավորություն» ստեղծելու առաջարկությամբ, որն ստացավ «Հուսեյնի պլան» անվանումը[1]:

«Հուսեյնի պլանով» նախատեսվում էր Հորդանան գետի արևելյան և արևմտյան ափերը միավորել մեկ պետության մեջ, որը կոչվելու էր «Արաբական Միացյալ Թագավորություն». այն բաղկացած էր լինելու երկու մասից կամ շրջանից՝ Պաղեստինյան, որի մեջ մտնելու էին Արևմտյան ափը և պաղեստինյան բոլոր այն տարածքները, որոնք կազատագրվեին իսրայելական օկուպացիայից, և Հորդանանյան, որի մեջ մտնելու էր Արևելյան ափը, այսինքն՝ բուն Հորդանանը: Հորդանանի թագավորը դառնալու էր պետության՝ ԱՄԹ-ի ղեկավար և իրականացնելու էր գործադիր ու օրենսդիր իշխանությունը: Ստեղծվելու էր կենտրոնական կառավարություն, որի իրավասության շրջանակներում էին գտնվելու բանակի և ռազմական ուժերի, արտաքին քաղաքականության և ֆինանսների հարցերը: Թագավորը հանդիսանալու էր ԱՄԹ-ի զինված ուժերի գլխավոր հրամանատարը: Հորդանանյան և Պաղեստինյան շրջաններում ստեղծվելու էին նրանց տեղական՝ հորդանանյան և պաղեստինյան կառավարման մարմիններ, այդ թվում՝ կառավարություններ՝ Նախարարների խորհուրդ, և օրենսդիր մարմիններ՝ պառլամենտներ: Նրանք տնօրինելու էին տեղական բնույթի՝ տնտեսական, կրթական, մշակութային, առևտրական և նման այլ բնույթի հարցեր: Ամմանը դառնալու էր թագավորության, իսկ Երուսաղեմը՝ Պաղեստինյան շրջանի մայրաքաղաքը[2]:

«Հուսեյնի պլանի» համաձայն՝ Պաղեստինը հանդես էր գալիս որպես առաջարկվող միացյալ թագավորության բաղկացուցիչ իրավահավասար մաս՝ իր ներքին վարչական սահմաններով և կառավարման մարմիններով՝ պահպանելով նաև իր աշխարհագրական անվանումը:

Այդ նախագիծը հետապնդում էր տարբեր նպատակներ՝ սևեռելու համաշխարհային հանրության ուշադրությունը Արևմտյան ափի իսրայելական օկուպացիան դադարեցնելու անհրաժեշտության ուղղությամբ՝ իբրև ԱՄԹ-ի գաղափարի իրականացման անհապաղ նախապայման, աշխուժացնելու մեծ տերությունների ջանքերը մերձավորարևելյան հակամարտության արդարացի կարգավորման հարցում, հաստատելու Հորդանանի հավակնություններն այդ պաղեստինյան տարածքների նկատմամբ՝ դրանով իսկ գործնական հնա-

ղավորություն տալով չափավոր դիրքորոշում ունեցող պաղեստինցիներին՝ կողմնորոշվելու դեպի թագավորական ռեժիմը՝ որպես մի ուժի, որն ընդունակ է դուրս բերելու պաղեստինյան հիմնախնդիրը պարապ բանավեճերից[3]:

Հուսեյն թագավորն իր ծրագրի կենսագործման հարցում հույս էր կապում ԱՄՆ-ի, ինչպես նաև Արևմտյան ափի հասարակական գործիչների հետ: Այսպես, հորդանանյան պառլամենտի Արևմտյան ափի պատգամավորների առջև ելույթում նա նշեց. «ԱՄՆ պատրաստ է աջակցելու ԱՄԹ-ի ստեղծման ծրագրին, որի հիմնադրման համար առկա են բոլոր նախապայմաններն, այժմ անհրաժեշտ է միայն փոխարինող գտնել ՊԱԿ-ին. այդ փոխարինողը հանդիսանում եք դուք»[4]: Առավել ևս, որ այդ ժամանակ, հորդանանյան արյունալի դեպքերից հետո, Արևմտյան ափի որոշ պաղեստինյան հասարակական գործիչներ՝ Հեբրոնի քաղաքապետ Մուհամմադ ալ-Ջաբարիի գլխավորությամբ հանդես եկան Արևմտյան ափում պաղեստինյան պետության ստեղծման առաջարկով և այդ նպատակով կապեր հաստատեցին օկուպացիոն իշխանությունների հետ[5]:

Արաբական Միացյալ Թագավորության պլանը որոշ իմաստով կարելի է համարել ֆանտաստիկ, քանի որ Հուսեյնի տիրապետության տակ տվյալ պահին գտնվում էր ապագա միացյալ թագավորության միայն մի՝ հորդանանյան շրջանը: Իսկ նրա երկրորդ բաղադրամասը՝Պաղեստինը, ոչ միայն Հուսեյնի, այլև արաբների տիրապետության դյորտում չէր գտնվում և օկուպացված էր Իսրայելի կողմից, որը բնավ էլ մտադիր չէր կամավոր, հենց այնպես զիջել Հորդանանին, հետևաբար ԱՄԹ-ն կարելի էր ստեղծել միայն Արևմտյան ափը նվաճելու ուղիով, այսինքն՝պատերազմի միջոցով, որին ոչ միայն Հորդանանը, այլև արաբական ոչ մի պետություն պատրաստ չէր[6]:

«Հուսեյնի պլանը» դարձավ միջարաբական հարաբերությունների լարվածության սրման և տարաձայնությունների խորացման նոր աղբյուր: Դրա դեմ հանդես եկան պաղեստինցիները՝ ծրագիրը որակելով որպես դավաճանություն իրենց հանդեպ և այդ պլանի իրագործման մեջ տեսնելով պաղեստինյան ժողովրդի ինքնուրույն գոյության ու իր անկախ պետությունն ունենալու իրավունքի խաթարման միտում և պաղեստինյան հարցը հօգուտ Հորդանանի շահերի լուծելու ցանկություն: ՊԱԽ-ի համագումարը (Կահիրե,1972թ. ապրիլի 6-12) և զուգահեռաբար ընթացող Պաղեստինյան ժողովրդական կոնֆերանսը որոշեցին լիովին մերժել «Հուսեյնի պլանը» և պայքարել պաղեստինյան ժողովրդի ինքնորոշման իրավունքի համար՝ ներառյալ հայրենիքի ամբողջ տարածքի ազատագրումն ու այստեղ Պաղեստինյան ազգային պետության հիմնումը:

1972թ. մարտի 17-ի ՖԱԹՀ-ի հեղափոխական խորհրդի նիստի ամփոփիչ հայտարարությունը քննադատության ենթարկեց Հուսեյն թագավորի նախաձեռնությունը: Կոմյունիկեի եզրափակիչ մասում նշվում էր. «...ոչ

թագավորը, ոչ էլ որևէ այլ կազմակերպություն իրավունք չունեն խոսել պաղեստինցիների անունից»[7]: Պարզաբանելով նման պլանից հրաժարվելու պատճառը՝ Յ.Արաֆաթը և ՖԱԹՀ-ի Կենտկոմի անդամ Ա.Այադը համագումարում նշեցին. «Ընդունել նման պետության ստեղծման գաղափարը, նշանակում է համաձայնել 20-ամյա պայքարի լիկվիդացիային ու իսրայելական պետության գոյությանը...Իսրայելը երբեք չի համաձայնի Երուսաղեմի, Արևմտյան ափի և Գազայի հատվածի օկուպացիան դադարեցնելու մտքին: Բացի դրանից, այդ պետությունը պատճառ կհանդիսանա մեր և Հորդանանի միջև հակամարտության խորացման»[8]: ՊԱԽ-ի 8-րդ համագումարի որոշումներում նշվում էր. «Պաղեստինին և Հորդանանին միավորում են սերտ ազգային հարաբերություններն ու պատմականորեն պայմանավորված միասնությունը՝ հիմնված ընդհանուր մշակույթի և լեզվի վրա: Տարբեր քաղաքական համակարգերի ձևավորումը Հորդանանում ու Պաղեստինում օրինական չէ: Անդրհորդանանի ու Պաղեստինի ժողովուրդները հանդիսանում են միևնույն ժողովուրդը»[9]: «Հուսեյնի պլանից» ՖԱԹՀ-ի հրաժարվելու պատճառներն առավել մանրամասն կերպով բացահայտվել են 1972թ. մարտի 16-ի փաստաթղթում: Դրանում նշվում էր, որ այդ նախագծի ընդունումը կնշանակեր պաղեստինցիների կողմից Իսրայել պետության ճանաչում, այդ ճանաչումը կհարկադրեր ՊԳՇ-ին մասնակցել «սիոնիստական թշնամու» հետ բանակցություններին, ինչը անխուսափելիորեն կհանգեցնի պաղեստինյան տարածաշրջանային կառավարության ստեղծմանն Արևմտյան ափում, որը կընդունի սահմանադրություն: Այդ կառավարությունը կհանդիսանա որպես հակակշիռ «պաղեստինյան ժողովրդի հեղափոխական իշխանությանը, որի միակ ներկայացուցիչն է հանդիսանում ՊԱԿ-ը: Այս ամենը հնարավորություն կտան Հուսեյն թագավորին հռչակել իրեն՝ որպես Պաղեստինի ներկայացուցիչ և իրականացնել տարբեր քաղաքական մանյովրներ»[10]:

ԱՄՆ-ի պետքարտուղար Հ.Քիսինջերը գրել է. «Հուսեյնը միակն էր բոլոր արաբ ղեկավարներից, ով առաջարկեց յուրահատուկ տարբերակ Մերձավոր Արևելքում խաղաղության հասնելու համար: 1973թ. փետրվարին կայացած մեր հանդիպման ժամանակ նա Նիքսոնին ու ինձ ներկայացրեց մի փաստաթուղթ, որտեղ մանրակրկիտ կերպով ճշտվում էին այդ նախագծի բոլոր մանրուքները: Դրանում նախատեսվում էին բանակցություններ անցկացնել Հորդանանի և Իսրայելի միջև, որոնք կայանալու էին Արևմտյան Եվրոպայում, ինչպես նաև ԱՄԹ-ին Գազայի տարածքի հնարավոր միավորման հարցը»[11]:

Կարծիք կա նաև, որ «Հուսեյնի պլանն» ունի ամերիկյան ծագում. ամերիկյան վարչակազմում Հորդանանի թագավորի քաղաքականությունն ուսումնասիրող աշխատանքային կոմիտեն բաժանվել էր երկու ընդդիմադիր խմբի: Թագավորի կողմնակիցները պնդում էին նրա իշխանության պահպանման և թագավորական արքունիքի հետ համագործակցության զարգացման

մասին, մինչդեռ հակառակ կողմն առաջ էր քաշում Հուսեյնի տապալման անհրաժեշտությունը: Այս երկու կարծիքների մրցակցության արդյունքում ծնվեց փոխզիջումային մի փաստաթուղթ, որը նաև բնորոշում էր Հուսեյն թագավորի դերը պաղեստինյան խնդրի լուծման հարցում. այդ փաստաթուղթն էլ հենց հանդիսանում է Միացյալ թագավորություն ստեղծելու մասին նրա ծրագիրը[12]:

Ինչպես արդեն նշվել է, Հորդանանի միապետի ծրագիրը խիստ քննադատեցին և մերժեցին նաև արաբական պետությունները, ինչը պատճառ դարձավ Հորդանանի քաղաքական մեկուսացման: Հատկապես կոշտ դիրքորոշում գրավեցին Սիրիան և Իրաքը, որոնք խստորեն դատապարտեցին այդ պլանը: Իրաքը Հուսեյնի առաջարկությունը բնութագրեց՝ որպես պետական դավաճանություն պաղեստինյան գործին[13]: 1972 թ. մարտի 15-ին, այսինքն՝ հենց այն օրը, երբ Հուսեյնը պաշտոնապես հայտարարեց ԱՄԹ ստեղծելու իր առաջարկությունը, Բաղդադում կայացավ Բաաս կառավարող կուսակցության համաարաբական և ռեգիոնալ ղեկավարության ու Իրաքի հեղափոխական հրամանատարության խորհրդի համատեղ նիստը, որի ժամանակ քննարկվեց հորդանանյան միապետի առաջարկությունը: Նիստում ընդունված բանաձևում նշվում էր, որ Հուսեյնի պլանը կապիտուլյանտական պլան է, նպատակ ունի հաշտություն կնքել թշնամու հետ և դավաճանություն է արաբական ազգի ու Պաղեստինի ժողովրդի շահերին: Իրաքը կոչ արեց արաբական բոլոր երկրներին դատապարտել Հորդանանի դիրքորոշումը և ընդդիմանալ նրա քաղաքականությանը[14]:

Արաբական երկրներում, ինչպես նաև ամերիկյան մամուլում ուշադրության արժանացավ այն հանգամանքը, որ նման պլանի հանդես գալը, առավելևս իրագործումը, հնարավոր էր միայն հորդանանյան և իսրայելյան իշխանությունների միջև նախնական համաձայնության առկայության դեպքում՝ վերջինիս կողմից Արևմտյան ափը Հորդանանին զիջելու հարցի շուրջ[15]: Նշենք, որ Թել-Ավիվի պաշտոնական արձագանքը այդ նախագծի վերաբերյալ բացասական էր, թեպետ նրա շահերից էր բխում Հաշիմյան միապետի իշխանության ներքո ֆեդերատիվ թագավորության առկայությունը՝ որպես հակակշիռ առանձին պաղեստինյան պետության ստեղծման տարբերակին: Միայն Իսրայելի արտգործնախարար Ալլոնը հայտարարեց, որ նման ծրագիրը չի հակասում իր սեփական պատկերացումներին պաղեստինյան թնջուկի կարգավորման վերաբերյալ[16]: Սակայն այդ կասկածները պաշտոնապես փարատեց Իսրայելի վարչապետ Գոլդա Մեիրը, ով 1972թ. մարտի 16-ին հայտարարեց. «Թագավորը որպես իր սեփականությունն է դիտում այն տարածքները, որոնք չեն գտնվում նրա վերահսկողության տակ: Հուսեյն թագավորի կողմից հայտարարված պլանը չի կարող Իսրայելի հետ համաձայնության հիմք ծառայել: Նրանք, ովքեր ցանկանում են կեղծ տպավո-

ություն ստեղծել, թե իբր պլանը մեզ հետ համաձայնեցված է կամ նախօրոք քննարկվել է մեզ հետ, ուղղակի ծիծաղելի են»[17]:

Այսպիսով, Միացյալ Արաբական Թագավորության ստեղծման Հուսեյն թագավորի պլանը, հանդիպելով ՊԱԿ-ի ու արաբական երկրների հակազդեցությանն, ինչպես նաև Իսրայելի կտրուկ ընդդիմությանը, այդպես էլ մնաց թղթի վրա ու շուտով մոռացության տրվեց:

Ծանոթագրություններ

[1] Палестинский ежедневник.-АбуДаби,1974, стр..328 ,
Дмитриев Б,Палестинский узел.-М, 1978,с.217-218.
[2] Հովհաննիսյան Ն.,Արաբական երկրների պատմություն, հ.4,ՀՀ ԳԱԱ,Արևելագիտության ինստիտուտ, Ե.2007, էջ 87-88,
Пырлин Е.Д.Трудный и долгий путь к миру:взгляд из Москвы на проблему ближневосточного урегулирования.-М.:«Российская политическая энциклопедия » (РСХИСПЭП), 2002,стр.146
[3] Пырлин Е.Д., там же, стр.148,
Suleiman J.The Palestinian Liberation Organization From Right of Return to Bandustan //Palestinian refugees:The right of return /Ed.By Aruri N.-L.:Steriing (Va):Pluto press,2001, p. 92-93
[4] Ֆալիստին աս-Սաուրա: -26.11.1976. (Բեյրութ)
[5] Shiff Z.,Rotshtein R.Fedayeen Guerrillas Against Israel.-New York: McKay,1972, p. 198
[6] Հովհաննիսյան Ն.,նույն տեղում, էջ 88-89
[7] Щевелев С.С.Палестинский аспект Ближневосточного конфликта (1947 -2005 гг.).-Симферополь -Москва:Издательство МЦСПИ,2005, Украинская историография, стр. 88
[8] Ալ-Վասա'իկ ալ-ֆիլաստինիա ալ-արաբիա 1971.-Բայրութ:Մու'ասսաթ ադ-դիրասաթ ալ-ֆիլաստինիա,1974,//Պաղեստինա-արաբական փաստաթղթեր 1971-Բեյրութ.Պաղեստինյան հետազոտությունների ինստիտուտ,1974, էջ 377-380
[9] Համիդ Ռաշիդ:Մուքառռառատ ալ-մաջլիս ալ-վատանի ալ-Ֆիլաստին 1964 -1974.— Բայրութ.Մարքազ ալ-աբխազ,1975, //Համիդ Ռաշիդ: Պաղեստինի ազգային խորհրդի բանաձևերը 1964 -1974.-Բեյրութ.Արտասահմանյան գերատեշչությունների ուսումնասիրության կենտրոն,1975, էջ 178,
International Documents on Palestine 1971.— Beirut:The Institute for Palestine Studies;Kuwait:The University of Kuwait,1974, p. 396-399
[10] International Documents on Palestine 1972.-Beirut:The Institute for Palestine Studies;Kuwait:The University of Kuwait,1975, p.294-296
[11] Kissinger H.Les Annees Orangenses.-Paris:Fayard,1982, p. 261-262
[12] Абдель-Азиз Усман, .Международная противоправность иорданского проекта Объединенного Арабского Королевства.-Киев,1979, стр.129
[13] Հովհաննիսյան Ն.Հ., Իրաքի դիրքորոշումը պաղեստինյան պրոբլեմի նկատմամբ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 15. Երևան, 1989, էջ 100-101
[14] Оганесян Н.,Отношения Иракской Республики со странами Арабского Востока, Е. 1985, стр.76
[15] Աս-սաբահ, 16.03.1972
[17] Пырлин Е.,Ближневосточный лабиринт, М.,1996, стр.35
[18] Հովհաննիսյան Ն.,Արաբական երկրների պատմություն, հ.4, Ե.2007, էջ 90